ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 2

ԳԼՈՒԽ 2. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳԾՈՎ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ..... Error! Bookmark not defined.

ԳԼՈՒԽ 3. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 3

ԳԼՈՒԽ 4. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 3

ԳԼՈՒԽ 5. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ 4

ԳԼՈՒԽ 6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ 4

ԳԼՈՒԽ 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4

ԳԼՈՒԽ 8.ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն) սահմանում է Յունիբանկ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) շահութաբաժինների չափի և պայմանների որոշման սկզբունքները, վճարման վերաբերյալ որոշման կայացման և վճարման գործընթացը:

1.2. Սույն Քաղաքականությունը մշակվել է շահութաբաժինների չափի որոշման մեխանիզմում բաժնետերերի և բոլոր շահագրգիռ կողմերի համար առավելագույն թափանցիկություն ապահովելու համար և սահմանում է սկզբունքները, որոնցով առաջնորդվում է Բանկի Խորհուրդը՝ բաժնետերերի Ընդհանուր ժողովին առաջարկություններ պատրաստելիս՝ Բանկի շահույթի բաշխման մասին որոշում կայացնելու համար:

1.3. Սույն Քաղաքականության նպատակներն են՝ բաժնետոմսերի շահութաբերության այնպիսի մակարդակի ձևավորում, ինչը թույլ կտա Բանկին լինել մրցունակ կապիտալի շուկայում և անհրաժեշտության դեպքում համալրել իր կապիտալը:

1.4. Սույն Քաղաքականությունը հիմնված է բաժնետերերի իրավունքների խստիվ պահպանման, Բանկի և բաժնետերերի շահերի հավասարակշռության վրա և ուղղված է Բանկի բաժնետերերի եկամուտների ավելացմանը՝ ինչպես շահաբաժինների վճարման, այնպես էլ Բանկի կապիտալիզացիայի բարձրացման միջոցով:

1.5. Շահութաբաժինների վճարման կարգի հիմնական դրույթներն ու սկզբունքները կարող են փոփոխվել՝ ելնելով տնտեսական իրավիճակների և (կամ) Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված նպատակների փոփոխություններից:

1.6. Շահութաբաժինների վճարման մասին որոշում ընդունելիս և վճարումն իրականացնելիս Բանկը ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և սույն Քաղաքականությամբ:

1.7. Սույն Քաղաքականությամբ չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ:

ԳԼՈՒԽ 2. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳԾՈՎ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Բանկի Կանոնադրությամբ նախատեսված են երեք տեսակի բաժնետոմսեր՝

- սովորական,
- հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր,
- հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր:

2.2. Յուրաքանչյուր տեսակի արտոնյալ բաժնետոմսերի տարեկան շահութաբաժնի չափը, վճարման կարգը և պայմանները սահմանվում են Բանկի Կանոնադրությամբ:

2.3. Արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինն՝ ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չէ վճարման, եթե դա կհանգեցնի Բանկի կողմից ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատվներից որևէ մեկի խախտմանը, ընդ որում, ամբողջությամբ կամ մասամբ չվճարված շահութաբաժինն ենթակա չէ հետագայում վճարվելու պայմանով կուտակման:

2.4. Սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինն ենթակա է վճարման Բանկի զուտ շահույթից, իսկ արտոնյալ բաժնետոմսերի գծով՝ նաև զուտ շահույթի հաշվին ձևավորված հիմնադրամներից:

2.5 Ընդհանուր Ժողովն իրավունք ունի որոշում ընդունել բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու, իսկ Բանկի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է Կանոնադրությամբ, նաև շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին:
2.6 Սովորական և արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինը վճարվում է ՀՀ դրամով:

ԳԼՈՒԽ 3. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Շահութաբաժինների գումարը հաշվարկվում է, հաշվի առնելով Բանկի զուտ շահույթի չափը:
3.2 Շահութաբաժինների չափը հաշվարկելիս կիրառվում են հետևյալ սկզբունքները՝

- ՀՀ գործող օրենսդրության, Բանկի կանոնադրության և ներքին իրավական ակտերի կարգավորումները և դրույթները,
- բաժնետերերի իրավունքներն ու շահերը,
- բաժնետերերի կարճաժամկետ (եկամտի ստացում) և երկարաժամկետ (Բանկի զարգացման ապահովում) շահերի հավասարակշռում,
- Բանկի ներդրումային գրավչության և կապիտալիզացիայի բարձրացման ապահովում,
- Բանկի կորպորատիվ կառավարման բարձր չափանիշներին համապատասխանության ապահովում,
- շահութաբաժինների չափի որոշման և դրանց վճարման մեխանիզմի առավելագույն թափանցիկության ապահովում:

3.3 Շահութաբաժինների վճարումների առաջարկվող չափը սահմանում է Բանկի Խորհուրդը:
3.4 Շահութաբաժինների վճարումների թիրախային մակարդակը կազմում է Բանկի նախորդ տարվա զուտ շահույթի առնվազն 25 տոկոսը:

ԳԼՈՒԽ 4. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

4.1 Բանկը կարող է վճարել եռամսյակային, կիսամյակային (այսուհետ՝ միջանկյալ) և /կամ տարեկան շահութաբաժիններ:
4.2 Տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումն ընդունվում է Բանկի Ընդհանուր ժողովի կողմից՝ Բանկի Խորհրդի առաջարկությամբ:
4.3 Ընդհանուր ժողովը սահմանում է տարեկան շահութաբաժինների չափը, ինչպես նաև դրանց վճարման կարգը և պայմանները:
4.4 Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Բանկի Կանոնադրությամբ կամ Ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:
4.5 Եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:
4.6 Եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:
4.7 Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

4.8 Տարեկան շահութաբաժինների վճարման և դրանց չափի հաստատման վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ընդհանուր Ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

4.9 Միջանկյալ շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումը ընդունվում է Բանկի Խորհրդի կողմից,ընդ որում, միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 (հիսուն) տոկոսը:

4.10 Բանկի Խորհուրդը սահմանում է միջանկյալ շահութաբաժինների չափը, ինչպես նաև դրանց վճարման կարգը և պայմանները:

4.11 Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 օր հետո:

4.12 Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Բանկի Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

- միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ,
- տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

4.13 Բանկը շահութաբաժինների վճարման մասին նախապես ծանուցում է Կենտրոնական բանկին՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:

ԳԼՈՒԽ 5. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

5.1. Բանկն իրավունք չունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե

- լրիվ չի վճարվել կանոնադրական կապիտալը,
- Բանկը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը՝ Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի դրույթներին համապատասխան,
- շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով,
- Բանկի զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով,
- այդ պահին բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

5.2. Կենտրոնական բանկը կարող է սահմանափակել Բանկի կողմից շահութաբաժիններ բաշխելը, այդ թվում՝ արտոնյալ բաժնետերերին կամ Բանկի այլ բաժնետերերի այլ ձևով որևէ եկամուտներ (հատուցումներ) վճարելը, եթե՝

- շահութաբաժինների բաշխումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, և (կամ)
- շահութաբաժինների բաշխման հետևանքով Բանկը խախտում է կամ կարող է խախտել առնվազն մեկ տնտեսական նորմատիվ, և (կամ)

- Բանկը խախտել է կամ շահութաբաժինների բաշխման արդյունքում կխախտի հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերից բարձր (ցածր) սահմանված շեմը (շեմերը):

ԳԼՈՒԽ 6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

6.1 Բանկն ապահովում է իր շահութաբաժինների քաղաքականության թափանցիկությունը՝ տեղադրելով համապատասխան տեղեկատվություն իր պաշտոնական կայքում՝ www.unibank.am հասցեով:
6.2 Բանկի կայքում հրապարակվող տեղեկատվությունը ներառում է սույն Քաղաքականությունը, դրանում կատարված փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշումը շահաբաժինների վճարման վերաբերյալ՝ ներառյալ չափը, ժամկետը, ձևը և շահաբաժինների վճարման կարգը:

ԳԼՈՒԽ 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն Քաղաքականությունը հաստատվում, փոփոխվում և լրացվում է Բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ:
7.2 Սույն Քաղաքականությունն ուժի մեջ է մտնում Բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված ժամկետում:
7.3 Բանկի որևէ բաժնետիրոջը չի տրամադրում որևէ արտոնություն՝ կապված հայտարարագրված և հաշվեգրված շահութաբաժինների վճարման ժամկետների հետ:
7.4 Վճարված շահութաբաժինների հարկումն իրականացվում է ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 8. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խմբագրման համար	Խմբագրման ամսաթիվ և որոշում	Խմբագրման նկարագրություն
1	Բաժնետերերի Ընդհանուր ժողովի ..2024թ. որոշում	-